# Արձանագրություն N 3

**«ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի**

ք. Քաջարան

«21» հունիս 2018թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Հրաչյա Թադևոսյան
հանձնաժողովի անդամներ՝ Ջիվան Նավասարդյան,Անահիտ Մարության
Աննա Գաբրիելյան,Նաիրա Իսրայելյան
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին**

1. Ընդունել ի գիտություն.
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Արֆարմացիա»ՓԲԸ-ն, « «Թեոֆարմա»ՍՊԸ-ն և «Խաչպար»ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.1. Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի համաձայն առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2. Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին տրամադրել է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:

1.6. Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :**

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և «Արֆարմացիա»ՓԲԸ-ի, « «Թեոֆարմա»ՍՊԸ-ի և «Խաչպար»ՍՊԸ-ի հայտը գնահատել «բավարար»:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :**

**3. «ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ- 18/11» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին**

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից են հայտարարվում

- «Արֆարմացիա»ՓԲԸ,
- «Թեոֆարմա»ՍՊԸ,

- «Խաչպար» ՍՊԸ

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :**

**4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին**

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝

№ 2 չափաբաժնի համար «Թեոֆարմա»ՍՊԸ-ին,

№ 5 չափաբաժնի համար «Խաչպար»ՍՊԸ-ին,

№ 12 չափաբաժնի համար «Արֆարմացիա» ՓԲԸ-ին:

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :**

**5 Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

5.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք. Քաջարան, Բակունցի 1, «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ, հաշվապահություն հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :**

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հրաչյա Թադևոսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ջիվան Նավասարդյան

_____ Անահիտ Մարության

_____ Աննա Գաբրիելյան

_____ Նաիրա Իսրայելյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Սահականուշ Գրիգորյան